

ՔՈՒԶԱԿԵԱՆ ՏԱՂԵՐ

Ա. ԽՈՒՄԲ

Հանչաք ես հայրէն ասի, որ քաջերն ի քարն ուսուցի.
Դարձայ մուճալաթ բերի, երկընուցըն սուն կապեցի.
Ելայ, ի վերան նըստայ, Աստուծոյ զանգատ մի արի.
Ա՛յ տէր, ամ ի վայր հայէ, խիստ ողորմը բան կու լինի.
Տասըն տարեկան մանուկն ի սիրուն զէտ մոմ կու հալի.
Ոսկորն է պատրոյզ դարձեր, ու կաշին զէտ մոմ 1) կու վառի:

×

Ա՛յ իմ նըռանախալաս որ եկեր ի մեր մահալաս.
Եկիր ու նոր սէր բերիր, ու լըցիր զկրակն ի վըրաս.
Երթամ աղաչեմ զԱստուած, երբ եկիր նա ալի չերթաս:
Պագիկ մ'յերեսէտ կ'ուզեմ, խնհաւատ մեռնիս թէ չըտաս.
Զերեստ երեսիս դընեմ, որ զեկած ճամփատ մոռանաս:

×

Արիք ի ծովափն իջնումք ու ձրկներ որսամք վարրմով.
Առնումք եւ ի տուն տանիմք, լուք եփեմք զինք բարձ կըրակով.
Զրկներն այլ ինձ հանց ասին, թէ լըցաւ մեր սիրտ արիւնով.
Երբ ես յարեւէս ելնեմ, թող ցամքի զինչ գետ կայ ու ծով:

×

Սըրտիկս երկու դուռ ունի, մէկըն գաղտ ու մէկն ալանի.
Յայն գաղտ դուռն ի դուրս ելայ, լուք գըտայ հատիկ մի ոսկի.
Ոսկին որ ի յափս ինկաւ, չէր ինկեր ի ձեռքն ոսկերչի.
Ոչ ձեռքն ոսկերչի ընկեր, ոչ լըսեր ձայնըս կըռանի:

×

Ով որ սիրու տէր մարդուն չող: բմի, ինքըն մեռանի.
Իր մահն ի մորին լինի 'ւ իր բերնին հաղորդ չը ինկնի.
Աղւեսն լալական լինի, դայլադաւան իր հարեղանի.
Շունն այլ իւր մատաղ լինի, լուք ագին զէտ զմոմ վառի:

1) Զեռագիր՝ մոտ:

Երնեկ ես նրան կու տամ որ առեր զիր եարն ու փախեր.
 Ոնց որ ըզկարմունճն անցեր՝ ջուրն ելեր զկարմունճն է տարեր.
 Ձընիկ՝ և եղեմիկ եկեր՝ զոտւընուն հետն է կորուսեր.
 Առեր՝ և ի պաղչան մըտեր, ցորեկով դընչիկն է պագեր:

×

Գիշերս ես ի քուն էի իմ հալալ տեղացն ի վերայ.
 Լուսինն էր կամար կապեր իմ ճոհար անձկանս ի վերայ.
 Իմ եարն յերազիս եկաւ, ի սիրուն զէտ հարբած եղայ.
 Յանկարծ ի քընուս ելայ, լուսի կայ ու խիստ կու ցոլայ:

×

Սիրեմ զատ սիրուն ուներտ, որ լուսինն ի մօտն է գերի.
 Պագնեմ զատ բարակ սլընկունքդ որ չաքարն ի մօտն է լեզի.
 Թուխ աչքդ եւ թուխ ուներտ զինչ ըզծով կու զարնէ ալին.
 Բեռնիկա 1) է ի շիշ նըման, որ վարդի ջըրովն է ի լի:

×

Չոխախովն ի վար կու գի, լուք մէկ մի անուշ ձայն էս.
 Դառնամ ի յետիս նայիմ՝ խօշ եարս է կանգներ չար չապկանց.
 Ձլաչկիկն ալ թուլումուլ կապեր՝ զկէս ճակտին թողեր է ի բաց.
 Թուխ աչին ծարուր քաշեր՝ և այտ քաֆիրտ ելեր յօրինաց:

×

Իմ եար, դուն երգիքդ ի քուն, ծոցըդ լոյս տայ աստղերուն.
 Կա՛մ առ զիս ի ծոցդ ի քուն, կա՛մ տաստուր տուր երթամ ի տուն.
 Ո՛չ կ'առնեմ ծոցիկս ի քուն, ո՛չ տաստուր տամ երթաս ի տուն.
 Պահեմ սահուն՝ և երերուն, մինչ որ դայ լուսն առաւօտուն:

×

Երկու եարուկ զիս կ'ուզէ . չըգիտեմ թէ ո՛րն է սիրուն.
 Մէկըն ցորեկւան արեւ, մէկ լուսին մութըն գիշերուն.
 Լուսին, ըզքեզ չեմ սիրեր, դու սորվեր ես խոռ կենալուն.
 Երթամ զարեգակն սիրեմ, որ ծագէ լուս առաւօտուն:

1) Այսիմքն՝ Բերնիկդ

Ա՛յ իմ եղբարց արիւն, ապառաժ քարըն կենաս դուն.
 Աչերդ է տուռնայ նըման, ո՛չ ի քուն ես, ո՛չ ի արթուն.
 Վախիմ թէ ըզքեզ որսան, լուք զըրկեն զիս ի քոյ տեսուն:

×

Ա՛յ իմ նոնոֆար ծաղիկ, յայտջըրիտ մէջըն կու կենաս.
 Զջուրըն քեզ պատճառ արիւր, ի սիրուտ քան զուռ կու դողաս:
 Գամ ջուրտ ի քենէ կտրեմ, որ տակէտ ի վեր չորանաս,
 Յաչացս քեզ առու հանեմ, ըքեզ ջըրեմ որ պայծառանաս:

×

Իմ բարձրագընաց լուսին որ կ'երթաս գիշերն անհուն.
 Շատ երգիք ի վար հայիս, շատ կուզալ տեսնուռ դու ի քուն.
 Զկոճկիկն այլ արձակ արեր, լոյս դըպեր ի մէջ ծըծերուն.
 Շառաւիղն յերկինքն ելեր՝ խաւարեր լոյսն աստղերուն:

×

Իմ բարձրագնաց 1) լուսին, շատ բարե տանիս իմ եարին.
 Բարեւըն տեսնում տանիմ, չեմ գիտեր զտունըն կողալին:
 Գընա՛ ի վերայ թաղին բարձրը պատ ու ծառն ի մի՛ին.
 Նըստեր ի ծառին չըքին, կու խըմէ ի լուրջ ապիկին.
 Խըմէ ու հայրէն կ'ասէ, թ'ինչ աղէկ է սէրն ու գինին:

Հրատ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

1) Զեռագիր՝ բարձրցնա:

